Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհուրդը հասարակական հիմունքներով գործող խորհրդակցական մարմին է, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 11.11.2013թ. թիվ 39-Լ որոշմամբ՝ երկու տարի ժամկետով:

Երիտասարդական խորհուրդը կազմված է նախագահից և վեց անդամից: Երիտասարդական խորհրդի նախագահին և անդամներին նշանակում է Պալատի նախագահը՝ երկու տարի ժամկետով: Երիտասարդական խորհրդի նախագահ կամ անդամ կարող է նշանակվել ցանկացած փաստաբան, որի արտոնագիրը կասեցված չէ:

Երիտասարդական խորհրդի նպատակն է՝

ա) աջակցել վերջին երեք տարում փաստաբանական գործունեության արտոնագիր ստացած և հետագայում նոր արտոնագրեր ստացող փաստաբանների (այսուհետ՝ Երիտասարդ փաստաբաններ)՝ մասնագիտական ոլորտում ինտեգրման գործընթացին,

բ) վեր հանել Երիտասարդ փաստաբանների մասնագիտական գործունեության ընթացքում առաջացած խնդիրները, ներկայացնել Պալատին և աջակցել դրանց լուծմանը,

գ) նպաստել Երիտասարդ փաստաբանների և փաստաբանների համագործակցությանը, Երիտասարդ փաստաբանների և փաստաբանների ոչ մասնագիտական շփումներին (կազմակերպել ոչ պաշտոնական հանդիպումներ, տարաբնույթ մշակութային և ժամանցային միջոցառումներ),

դ) կապեր հաստատել այլ երկրներում գործող նմանատիպ կառույցների հետ:

Երիտասարդական խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Նիստերը հրավիրում և նախագահում է Երիտասարդական խորհրդի նախագահը՝ իր կողմից հաստատված օրակարգով: Նիստերը կարող են հրավիրվել նաև Երիտասարդական խորհրդի անդամների նախաձեռնությամբ:

Երիտասարդական խորհրդի որոշումները կայացվում են քվեարկությանը մասնակցած անձանց ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ: Ձայների հավասարության դեպքում Երիտասարդական խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

Երիտասարդական խորհրդի որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:

Երիտասարդական խորհուրդը գործում է իր «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի կանոնակարգի» հիման վրա, որը հաստատվել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 11.11.2013թ. թիվ 39-Լ որոշմամբ:

Երիտասարդական խորհրդի անդամներն են հետևյալ փաստաբանները.

Ինեսսա Պետրոսյան
Երիտասարդական խորհրդի նախագահ

Ռուզաննա Ազրոյան
Երիտասարդական խորհրդի անդամ



Աշոտ Խլոյան
Երիտասարդական խորհրդի անդամ

Դավիթ Սրապիոնյան
Երիտասարդական խորհրդի անդամ

Կարո Ասատրյան
Երիտասարդական խորհրդի անդամ

Վահե Տիգրանյան
Երիտասարդական խորհրդի անդամ

Զարուհի Հայրապետյան
Երիտասարդական խորհրդի անդամ